«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 12.01.2024 թ. թիվ 62 Ն/Մ հրամանի

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ _8_ 09.01.2024թ.

ՎԱՆԱՁՈՐ

2023թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՎՊՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈԻԳԸ) ՎՊՀ ուսանողներին միավորող՝ բուհական ներկայացուցչական ինքնակառավարվող միավորում է, որի նպատակն է նպաստել ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2. ՈՒԳԸ-ն իր գործունեությամբ ղեկավարվում է Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին», ՀՀ օրենքներով ՎՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով:

1.3. ՈԻԳԸ իր նպատակների ու խնդիրների իրականացման նպատակով համագործակցում է ՎՊՀ-ի գիտական և ուսումնական ստորաբաժանումների, ամբիոնների, գիտական գործունեություն իրականացնող այլ մարմինների հետ, ՎՊՀ ուսանողական խորհրդի, ՎՊՀ արհեստակցական միության հետ:

1.4. Ուսանողական գիտական ընկերության անվանումն է.

- հայերեն՝ Ուսանողական գիտական ընկերություն՝ ՈԻԳԸ,
- ռուսերեն՝ Студенческое Научное Общество՝ СНО,
- անգլերեն՝ Students Scientific Society՝ SSS,

1.5. ՎՊՀ ՈԻԳԸ-ն ունի ձևաթուղթ, ֆեյսբուքյան էջ:

1.6. ՎՊՀ ՈԻԳԸ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 36:

1.7. ՈԻԳԸ գործունեության վերահսկողությունն իրականացնում է ՎՊՀ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը:

2. ՈԻԳԸ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ՈԻԳԸ նպատակն է՝

- նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր-մշակութային զարգացմանը,
- նպաստել ուսանողների ներգրավվածությանը ՈԻԳԸ կողմից կազմակերպվող ներհամալսարանական միջոցառումներին,

– նպաստել ուսանողության ներգրավվածությանը արտահամալսարանական գիտաժողովներին և միջոցառումներին:

2.2. ՈՒԳԸ խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են՝

- կրթական և գիտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարումը, կազմակերպումը և իրականացումը,
- ուսանողական գիտաժողովների, սեմինարների, դասախոսությունների և այլ գիտական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպումը՝ դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,
- ՈՒԳԸ համալսարանական և արտահամալսարանական տարբեր միջոցառումներում ներգրավվածության ապահովումը,
- միջբուհական գիտական կապերի հաստատումը, համագործակցությունը,
- բուհական երիտասարդական գիտական ծրագրերի և ներուժի նպատակային ուղղվածության մասին տեղեկատվության համակարգումը,
- կրթական, գիտական խմբերում և ծրագրերում ուսանողների ներգրավումը,
- ուսանողների գիտական նյութերի հրապարակումը,
- բուհական ոլորտում ուսանողակենտրոն գաղափարի կարևորության հաշվառմամբ՝ այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատումը և տեղեկատվության փոխանակումը:

3. ՎՊՀ ԵՎ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

3.1. ՈՒԳԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԸ

3.1.1. ՎՊՀ ՈՒԳԸ ղեկավար մարմինը ՈՒԳԸ ընդհանուր ժողովն է, որի նիստերը գումարվում են ՎՊՀ ՈՒԳԸ նախագահի կողմից՝ ուսումնական կիսամյակում ոչ պակաս քան երկու անգամ:

3.1.2. ՈՒԳԸ Ընդհանուր ժողովի կազմի մեջ են մտնում ՈՒԳԸ նախագահը, փոխնախագահները, քարտուղարը, Ֆակուլտետի ՈՒԳԸ-ների նախագահները:

3.1.3. ՈՒԳԸ ընդհանուր ժողովի գործառույթներն են՝

– ընտրում է ՎՊՀ ՈՒԳԸ նախագահին

- քննարկում և որոշում է ՈՒԳԸ-ի գործունեության ուղղությունները, ձեռնարկում միջոցներ որոշումների իրականացման համար,
- ի գիտություն է ընդունում ՈՒԳԸ նախագահի տարեկան հաշվետվությունը,
- մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում է և համակարգում Ֆակուլտետի ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
- որոշում է ընդունում շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում:

3.1.4. ՎՊՀ ՈՒԳԸ Ընդհանուր ժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Ընդհանուր ժողովի անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

3.1.5. Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈՒԳԸ նախագահի կամ Ընդհանուր ժողովի անդամների մեկ երրորդի պահանջով:

3.1.6. ՎՊՀ ՈՒԳԸ կազմը ձևավորվու է Ֆակուլտետի ՈՒԳԸ անդամներից:

3.1.7. ՈՒԳԸ նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում ՎՊՀ ՈՒԳԸ նախագահ ընտրվելու համար ուսանողները առաջադրում են իրենց թեկնածությունը (*Հավելված 1*):

3.1.8. Թեկնածությունն առաջադրելուց հետո մեկշաբաթյա ժամկետում թեկնածուներն իրենց ծրագրերը ներկայացնում են Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահներին գրավոր տեսքով:

3.1.9.Ուսանողների առաջադրվելուց հետո, եռօրյա ժամկետում ՎՊՀ ՈՒԳԸ ընդհանուր ժողովը հրավիրում է նիստ, որի ժամանակ գնահատվում են բոլոր թեկնածուների ներկայացրած հայտերը, ծրագրերը և անց է կացվում փակ քվեարկություն, որի արդյունքնում ընտրվում է ՈՒԳԸ նախագահ: Քվեարկությունն իրավազոր է, եթե մասնակցում են ֆակուլտետների բոլոր նախագահները: Ընտրությունից հետո հրապարակվում է ընտրված նախագահի անունը:

3.1.10. ՈՒԳԸ նախագահն ընտրվում է 2 տարի ժամկետով՝ վերընտրվելու հնարավորությամբ:

3.1.11. ՈՒԳԸ նախագահը՝

- նշանակում է 2 փոխնախագահներ և քարտուղար

- ի պաշտոնե ներկայացնում է ընկերությունը, կազմակերպում է ՈՒԳԸ կառուցվածքային միավորների աշխատանքները և համակարգում է ընկերության ընդհանուր ժողովի գործունեությունը,
- ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը,
- պարտավորվում է իրականացնել արտաքին կապերի մասնավորապես՝ այլ բուհերի հետ համագործակցության, փոստային նամակագրության արտաբուհական միջոցառումների կազմակերպման ու համակարգման գործառույթներ:
- կազմակերպում և վերահսկում է ՈՒԳԸ կողմից կազմակերպված գիտաժողովների անցկացման ամբողջ ընթացակարգը,
- արտաբուհական գիտաժողովների պարագայում անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով ղեկավարում է գիտաժողովին մասնակցող պատվիրակությունը:
- տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ՎՊՀ Գիտական խորհրդում:

3.1.12. Ընկերության նախագահի բացակայության դեպքում ընդհանուր ժողովի որոշմամբ՝ նրա լիազորությունները ստանձնում է փոխնախագահներից մեկը:

3.1.13. ՎՊՀ ՈՒԳԸ նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել ՎՊՀ ՈՒԳԸ Ընդհանուր Ժողովի անդամների 2/3-ի նախաձեռնությամբ այն դեպքում, երբ ՎՊՀ ՈՒԳԸ նախագահի գործունեությունը չի համապատասխանում ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակներին կամ խնդիրներին

3.1.14. ՎՊՀ ՈՒԳԸ նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում Ընդհանուր ժողովը, մինչև նոր ընտրությունների անցկացումը, փոխնախագահներից մեկին նշանակում է ՎՊՀ ՈՒԳԸ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

3.2. ՎՊՀ ԵՎ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.2.1. ՎՊՀ ՈՒԳԸ կառուցվածքային սկզբնական օղակները Ֆակուլտետի ՈՒԳԸ են, որոնց կարող են անդամակցել ՎՊՀ ուսանողները, հայցորդները և ասպիրանտները:

Ֆակուլտետի ՈՒԳԸ-ը անդամակցելու համար անհրաժեշտ է լրացնել անդամակցության թերթիկ *(Հավելված 2)*:

Ֆակուլտետի ՈՒԳԸ անդամները համատեղությամբ հանդիսանում են ՎՊՀ ՈՒԳԸ անդամ:

3.2.2. Ֆակուլտետի ՈՒԳԸ ղեկավարում է Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը:

3.2.3. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ դառնալու համար հայտարարվում է մրցույթ: Մրցույթին կարող են մասնակցել արդեն իսկ հայտագրված և ֆակուլտետի նախագահի պաշտոնի համար սահմանված չափանիշներին համապատասխանող ուսանողները (*Հավելված 3*):

3.2.4. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ընտրվում է առաջադրված թեկնածուներից ՎՊՀ ՈՒԳԸ Ընդհանուր ժողովի կողմից ձայների մեծամասնությամբ և փակ քվեարկությամբ: Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ընտրությունից հետո եռօրյա ժամկետում նշանակում է 2 փոխնախագահ 1 առկա և 1 հեռակա համակարգում սովորող ուսանողներից ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության անդամներից:

3.2.5. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ընտրվում է 1 տարի ժամկետով, վերընտրվելու հնարավորությամբ:

3.2.6. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի գործառույթներն են՝

- կազմակերպել ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքները,
- մասնակցել ՎՊՀ ՈՒԳԸ Ընդհանուր ժողովի նիստերին և պարբերաբար ներկայացնել ֆակուլտետի ընթացիկ և կատարված աշխատանքները,
- ներգրավել ֆակուլտետի ուսանողներին ՈՒԳԸ կազմակերպած միջոցառումներում,
- ըստ ուսումնական տարվա աշխատանքային պլանի կազմակերպել բազմաբնույթ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

3.2.7. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը իր գործունեությամբ հաշվետու է ՎՊՀ ՈՒԳԸ նախագահին:

3.2.8.Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահը ի պաշտոնե հանդիսանում է ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ:

3.2.9. Ֆակուլտետի ՈՒԳԸ նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի կողմից կամ անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ: Նիստերը վարում է նախագահը: Նիստերը իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Ֆակուլտետի ՈՒԳԸ անդամների մեծամասնությունը:

3.2.10. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների կարող են վաղաժամկետ դադարեցվել ՎՊՀ ՈՒԳԸ-ի նախագահի կամ Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի անդամների 2/3 և ավելի նախաձեռնությամբ այն դեպքում, երբ Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի գործունեությունը չի համապատասխանում ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակներին կամ խնդիրներին:

3.2.11. Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում ՎՊՀ ՈՒԳԸ-ի նախագահը, մինչև նոր ընտրությունների անցկացումը, Ֆակուլտետի ՈՒԳԸ փոխնախագահներից մեկին նշանակում է Ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

4. ՈՒԳԸ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ուսանողական գիտական ընկերության միջոցները գոյանում են ՎՊՀ բյուջեից կատարվող մասհանումներից:

4.2. ՈՒԳԸ՝ սահմանված կարգի համաձայն, անվճար օգտվում է ՎՊՀ-ի տարածքից, գույքից, նյութատեխնիկական և այլ միջոցներից:

4.3. ՈՒԳԸ-ը հատկացված միջոցները բացառապես օգտագործվում են Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում և փոփոխվում գիտական խորհրդի կողմից ընդունվելուց հետո՝ ռեկտորի հրամանով:

Հավելված 1

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ[1] ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՎՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահին առաջադրվող պահանջներ՝

1. ՎՊՀ ուսանող (առնվազն չորս կիսամյակ ուսանած), տեղեկանք բուհից,
2. Ուսանողական գիտական ընկերության անդամակցություն,
3. Բարձր առաջադիմություն. ներկայացնել ՄՈԳ-ի թուղթ,
4. Գիտաժողովների մասնակցություն. Ներկայացնող հավաստագիր կամ ուսանողական գիտական ընկերության նախագահից տեղեկանք,
5. Տպագրած կամ տպագրության երաշխավորված գիտական հոդվածի առկայություն. Ներկայացնել հոդվածը կամ երաշխավորագիրը,
6. Ղեկավարման մեկամյա ծրագրի առկայություն,
7. Բնութագիր՝ տրված դեկանի կողմից:

---

[1] Երկու պաշտոններին հավակնող ուսանողների պարագայում էլ նախապատվությունը կտրվի առավել հասարակական ու գիտական առավել բարձր ցուցանիշներ ունեցող թեկնածուներից:

Հավելված 2

ՎՊՀ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Անուն, ազգանուն, հայրանուն	
Ֆակուլտետ	
Բաժին, կուրս	
Հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե	
Ո՞ր ֆակուլտետի ՈՒԳԸ-ին եք ցանկանում անդամակցել	

Հավելված 3

ՎՊՀ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

1. ՎՊՀ ուսանող (առնվազն երկու կիսամյակ ուսանած), տեղեկանք բուհից,
2. Ուսանողական գիտական ընկերության անդամակցություն,
3. Բարձր առաջադիմություն. Ներկայացնել ՄՈԳ-ի թուղթ,
4. Բնութագիր՝ տրված դեկանի կողմից: